Ինչ Պետք Է Իմանաք Ապակողմնորոշող Ծանուցման Մասին

Կեղծ եւ ապակողմնորոշող ծանուցումներ

Ամբողջ երկրի տարածքում սպառողները հաճախ զոհ են դառնում ապակողմնորոշող գովազդատուների, ովքեր օգտագործում են «սոցիալական ապահովություն» և «Medicare» արտահայտությունները՝ հանրությանը հրապուրելու նպատակով: Հաճախ, այս ընկերությունները Սոցիալական Ապահովության անվճար ծառայությունները առաջարկում են ձեզ վճարովի: Այս ծառայությունները ընդգրկում են՝

- Ամուսնությունից ետք Սոցիալական Ապահովության քարտ ստանալ ամուսնական անունով.
- Սոցիալական Ապահովության քարտ ստանալ կորած քարտի փոխարեն.
- «*Սոցիալական Ապահովության Հաշուեցոյց*» (*Social Security Statement*) ստանալ. եւ
- Երեխայի Սոցիալական Ապահովության համար ստանալ:

Որոշ ծանուցողներ ուզում են ձեզ համոզել, որ Սոցիալական Ապահովությունը տնտեսական վատ վիճակում է եւ ձեզնից բող են պահանջում ձեր ապագայի նպաստները պաշտպանելու համար: Այլ ընկերություններ արտադրում են «Սոցիալական Ապահովության Հաշուեցոյց» ի նման տեղեկություններ, ձեզ համոզելու թէ իրենք օրինական գործ են անում Սոցիալական Ապահովության հովանավորությամբ: Սովորաբար, այս ընկերությունները հաւաքում են ձեր անձնական տեղեկությունները ձեզնից եւ հետո վաճառում են ձեզ նոյն տեղեկությունը դրամի փոխարեն: Այս կեղծ առեւտրական սովորությունը հստակորեն ապակողմնորոշում եւ խաբում է Ամերիկյան հասարակությունը:

Ապակողմնորոշող ծանուցումների դեմ պայքարելու համար ինչ է արվել

Օրենքը արգիլում է մարդկանց եւ ոչ կարավարական ընկերությունների որ չգործածեն որոշ բառեր կամ խորհրդանշաններ, որոնք ապակողմնորոշում են ուրիշներին: Նրանց ծանուցումը պետք չե մարդկանց առաջնորդի այն հավատքին, որ իրենք ներկայացնում են, հովանավորված կամ վավերացված են Սոցիալական Ապահովության կամ Մէտիքէրի եւ Մէտիքէյտի Ծառայությունների Կետրոնի կողմից:

Սոցիալական Ապահովության ապակողմնորոշող ծանուցման դեպքում, Սոցիալական Ապահովության Ընդհանուր Քննիչի Գրասենյակը կը քննի ծանուցումը: Երբ հարցում է ուղղվում իրենց ծանուցման մասին, շատ անձեր եւ ընկերություններ կամեցողությամբ դադրեցնում են դրանց օգտագործումը կամ փոխում են ծանուցումը՝ օրենքի հետ համաձայնելու համար: Բայց եթե կամավոր համաձայնության չհասնեն, Ընդհանուր Քննիչի Գրասենյակը ծանուցումը ներկայացնող անձից կամ ընկերությունից մինչեւ 5,000 դոլարի տուգանք պահանջում է՝ փոստով ուղարկված ամեն մի ծանուցումի համար: Մէտիքէրի վերաբերվող ապակողմնորոշող ծանուցումների մասին պետք է տեղեկացնեք Առողջապահական եւ Մարդկային Ծառայությունների բաժանմունքի Ընդհանուր Քննիչի Գրասենյակը՝ վերաքննության համար:

Ինչ անել՝ եթե ապակողմնորոշող տեղեկություն ստանաք Սոցիալական Ապահովության մասին

Փոստով ուղարկված ծրարը իր ամբողջությամբ ուղարկեցեք՝

Office of the Inspector General
Fraud Hotline
Social Security Administration
P.O. Box 17768
Baltimore, MD 21235

Նույնպես, իմացրեք ձեր նահանգի ընդհանուր դատախազին կամ ձեր շրջանի վաճառականներու գրասենյակին (Better Business Bureau)

Ինչպես կապ հաստատել Սոցիալական ապահովության վարչության հետ

Լրացուցիչ տեղեկություններ ստանալու և մեր հրապարակումների կրկնօրինակները գտնելու համար այցելեք մեր կայքը՝ ***www.socialsecurity.gov*** կամ զանգահարեք անվճար հեռախոսահամարով **1-800-772-1213** (խուլ կամ թույլ լսողությամբ անձինք կարող են զանգահարել հեռատիպի համարով՝ **1-800-325-0778**): Մենք պահպանում ենք բոլոր հեռախոսազանգերի գաղտնիությունը: Եթե իսպանախոս եք, ապա սեղմեք 2: Մյուս բոլոր լեզուների համար սեղմեք 1, սպասեք գծի վրա և լուռ մնացեք անգլերեն ինքնաշխատ հուշումների ժամանակ, մինչև ներկայացուցիչը կպատասխանի: Ներկայացուցիչը կկապվի թարգմանչի հետ, ով կօգնի պատասխանել Ձեր զանգին: Թարգմանչի ծառայություններն անվճար են: Մենք կարող ենք պատասխանել Ձեզ հետաքրքրող հարցերին առավոտյան ժամը 7-ից մինչև երեկոյան ժամը 7-ը, երկուշաբթի-ուրբաթ օրերին: Անգլերեն տեղեկություններ կարող ենք տրամադրել ինքնաշխատ հեռախոսային ծառայության միջոցով՝ օրական 24 ժամ:

Ուզում ենք նաեւ վստահ լինել թէ դուք ստանում եք ճշգրիտ տեղեկություն ու հարգալից ծառայություն: Այդ պատճառով, Սոցիալական Ապահովության երկրորդ ներկայացուցիչ մը հսկում է որոշ հեռախոսազանգեր:

Social Security Administration
SSA Publication No. 05-10005-AM
What You Need To Know About Misleading Advertising (Armenian)
March 2009